

Վերջապէս աւելի պարզ կ'ըլլայ ընդունիլ թէ՛ այս կերպասը Խաչակիրներէն գտնուած է Երուսաղէմի առման ժամանակ: Արդ, Aptի իշխանները առաջին Խաչակրութեան կ'ընկերանային: Աւելի լաւագոյն, Aptի եպիսկոպոս Isoard՝ Քրեմոնի ժողովին ներկայ ըլլալէ յետոյ, ընկերացաւ Խաչակրաց դէպի Արևելք: Այսպէս կը բացատրուի այս մասունքին ներկայութիւնը Aptի Ս. Աննա եկեղեցիին մէջ (քաղուած «La Bourse Egyptienne», էն, 6 դեկտ. 1933):

11. Փարիսեցիին քան սեղւոյն եկեղեցիին եւ Քրիստոսի ոսից հետքերը. — Յիսուս օր մը նստած էր փարիսեցիի մը տան մէջ, ուր Մարիամ Մագդաղինացին՝ ի նշան իր զգլման նարդոսի ազնիւ իւղով կ'օծէր Յիսուսի ոտքերը՝ թրջելով զանոնք արցունքով: Այս տան մէջ էր որ Տէրը խօսեցաւ երկու պարտապաններու առակը, երբ տեսաւ որ փարիսեցիին միտքը կը տանջուէր մեղաւոր կնոջ մը՝ Յիսուսի հետ խօսելուն առթիւ (Ղուկ. է. 36-50): Այս տեղը կը գտնուի Ս. Աննայի տան մօտ, Երուսաղէմի հիւսիս-արեւելեան անկիւնը. ի պատիւ տեղւոյն՝ ի հնումն շինուած էր եկեղեցի, և ուր կը գտնուէր Ասորիներու վանքը՝ զոր յետոյ այլազգիները գրաւած են: Նոյն տեղը ծառի մը տակ ցոյց կը տրուի քար մը, որուն վրայ, ըստ աւանդութեան, տպաւորուած են Քրիստոսի ոտքերուն հետքերը (Հան. էջ 230-231, Ալֆ. էջ 301):

12. Պրոպասիկէի աւազանը եւ Քրիստոսի խաչափայտը. — Երուսաղէմի արևելեան կողմը, պարիսպին եւ Ս. Աստուածածնի դրան մօտ կը տեսնուի չոր եւ ցամաք աւազան մը, ուր մեր Տէրը բժշկեց անդա-